

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.  
 Առանձին համարները 7 կոպեկով.  
 Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.  
 Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшагъ».  
 Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
 (բացի կիրակի և սոն օրերէն)  
 Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով.  
 Յայտարարութիւնները համար վճարում են  
 իւրաքանչիւր բառին 2 կոպեկի.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

## „ՄՇԱԿ“

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրօգրամայով: Մեր ստանում ենք սեփական շնորհակալութիւններ.  
 «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսանը 6 ռուբլի.  
 Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ՌՄԲԱՍԱՍՏԱՆԸ (Քարտեզայա և Բաղարայա փողոցների անկիւնում, Թամազեանի տանը).  
 Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

#### ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Աշրդեան պատրիարք և պատրիարքական ընտրելիներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չը պէտք է կենտրոնացնել: Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերեզմանի վաճառումը. Երկու յօդուածներ. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանեան նահանգում:

#### ԱՇԽԱՏԱՆ ԳԱՏՐԻԱՐԻ ԵՒ ԳԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՆԵՐ

##### II

Թէ ո՞վ պիտի ըլլայ յաջորդն Աշրդեան պատրիարքի, կարելի չէ գայը ճիշդ կերպով ըսել, բայց հաւանական ընտրելիներու վրայ խօսել հնարաւոր է:  
 Տարակոյս չը կայ, թէ իրիմեան Հայրիկի մասին այս անգամ ևս քուէներու մեծամասնութիւն չը դոյանար. Ազգ. ժողովն յանդուակութիւն կը համարէ պատրիարք ընտրել իրիմեան Հայրիկը: Ազգ. ժողովը այդ երկուստեք թիւն անբացատրելի է. ներկայ հանգամանքներու մէջ ժողովրդական պատրիարք մը անհրաժեշտ պիտոյք մըն է: Իրիմեան Հայրիկի նման անսահման ժողովրդականութիւն վայելող եպիսկոպոս մը երբ բազմի պատրիարքական աթոռին վրայ, արդէն կատարեալ հանգամանքներ կը տիրէ: Արդէն ունենալով այդպիսի պատրիարք մը, իրիմեան Հայրիկի պատրիարքական աթոռին վրայ կըլլայ շրջակայից և «դիւանագէտ»-ին համաձայնութիւն որ դոյանայ Հայ-

րիկ-պատրիարքի և կառավարութեան միջև, այդ արդէն ազգին ընդունելի է:  
 Իրիմեան Հայրիկ այնքան գործնական մարդ է, որ նա երբեք չը ներկայացնէր կառավարութեան այնպիսի առաջարկներ, որք վրդովիչ համարուին: Իրիմեան անտեսական հարցերու ներկայացուցիչն է, հետեւաբար անտեսական հարցերու կարգադրութեան պատրիարքը կըլլայ:  
 Այս ամէն նկատողութիւններով հանդերձ, կը կարծենք թէ Ազգային ժողովը պատրիարք չընտրէր իրիմեան Հայրիկը:  
 Իրիմեան Հայրիկի վերջ երեք ընտրելիները դեմ առ դեմ են:  
 Այդ երեք ընտրելիներէն մին նոր է. Ալեքաթեան Գրիգորիս եպիսկոպոսն է:  
 Այդ եպիսկոպոսն ճարտի առաջնորդն է. Անի առաջնորդական տեղապահն եղաւ. սակայն, ուրիշ առաջնորդներու նման ինքն ալ Կ. Պոլիս թափառելու հարկին մէջ է:  
 Գրիգորիս եպիսկոպոս ժամանակաւ խրմբազիր եղած է «Թռչնիկ» կղերական «անուն հանդիսի մը, անտի կը կոչվի «Թռչնիկ եպիսկոպոս», ինչպէս ժամանակատեղութիւն էր Կ. Պոլիս թերթին անունովը նշանակել խմբագրը: Փոխանակ ըսելու թէ «Իրիմեան կը գտնուէր այս ինչ տեղը», կըսէին «Մախիւր կը գտնուէր այս ինչ տեղը»:  
 Գրիգորիս եպիսկոպոս թռչնիկ մը ըլլալէ շատ հեռի է. մի հսկայ պարթեանն է եկեղեցական է: Նա լաւ կը ճանչնայ Հայաստանի վիճակը, այժմ Կ. Պոլիս առաջնակարգ համարձակասու եկեղեցականն է. մեծ դեր կը խաղայ եկեղեցական գործերու մէջ, և բաւական ժողովր-

դականութիւն կը վայելէ: Արդէն «Մշակ» մէջ առիթ ունեցած ենք ուրիշ անգամներ շատ լաւ խօսել այդ եպիսկոպոսին վրայ:  
 Բայց Գրիգորիս եպիսկոպոս ապահովաբար պատրիարք կը դառնայ, եթէ խորէն Նար-պէյ և Իզմիրլեան Մատթէոս սրբազաններ ընտրելի չը համարուին: Այդ երկու սրբազաններու հետ երբ դրուի Գրիգորիս եպիսկոպոս հաւանական ընտրելի մըն է, բայց ոչ ապահով:  
 Ապահով ընտրելիները երկուք են՝ Նարպէյ խորէն սրբազան, և Իզմիրլեան Մատթէոս սրբազան:  
 Այդ երկու եպիսկոպոսներն ալ մօտէն չեն ճանչցած Հայաստանը, հետեւաբար չեն կրնար համարուել ամենայնաբար պատրիարքներ: Սակայն այժմ այնպիսի վիճակի մէջ ենք, որ մեր պատրիարքի պաշտօնը եկեղեցական ու հայրապետական ըլլալէ աւելի է դիւանագիտական ու պետական:  
 Պատրիարքը տէրութեան հետ պիտի բանակցի, օտարներու հետ տեսակցելու հարկին մէջ կը գտնուի, գանազան խնդիրներու համար ժողովուրդն համոզելու պարտաւոր է. վերջապէս իր ցուտ եկեղեցական ինքնիշխանութիւնը պիտի կարգադրէ:  
 Հայաստանը մօտէն ճանչցող Հայ եպիսկոպոսներէն շատերը գուրդ կը այտակութիւններէն, որ իսկապէս անհրաժեշտ են Պատրիարքին ներկայ ժամանակին մէջ:  
 Նար-պէյ սրբազան և Իզմիրլեան սրբազան զոհացուցիչ պայմաններու մէջ կը գտնուին:  
 Աւելորդ է երկարորէն խօսել Նար-պէյ սրբազանի համար նա արդէն հանրաճանօթ է: Մեր կողմէ այսչափը կրնանք ըսել, որ եթէ Նար-պէյ սրբազան շուտ վերադառնայ Պոլիս, նա արդէն ունենալով Ազգ. ժողովի մէջ բաւական թիւ մը երեսփոխաններու, որք կը փափազին անոր պատրիարքութիւնը, որ դառնայ պատրիարքական ամենէն հաւանական ընտրելին:  
 Իսկ եթէ սրբազանը շարունակէ այստեղ մնալ, այն ատեն քնաւ ընտրելի չը կրնար համարուել: Այն ատեն Գրիգորիս սրբազանի հետ կը մնայ Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսը, որ ամենէն աւելի հաւանական պատրիարքացուն է:  
 Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան եպիսկոպոսն առաջնորդ է, տկարութեան պատճառաւ ամառը Պոլիս կուգայ օգտփոխութեան:  
 Իբր առաջնորդ, Մատթէոս եպիսկոպոս

չոյց տուաւ վարչական գեղեցիկ յատկութիւններ:  
 Այդ եպիսկոպոս կը վայելէ նաև բարի համբաւ ուղղամիտ և անարատ եկեղեցականի:  
 Վերջին ժամանակներս, ինչպէս նաև ուրիշ պարագաներու մէջ ալ Մատթէոս եպիսկոպոսի գանազան աշխատութիւնները մեծապէս յանձնարարեցին զնա ազգային համակրանքին ու պատկառանքին:  
 Եթէ Նար-պէյ սրբազան չը գնայ Պոլիս, կարելի է դիմել ստուգապէս ըսել, որ Մատթէոս եպիսկոպոս պատրիարք կըլլայ:  
 Այս չորս անուններէն զուրս ուրիշ ոչ ոք կայ. որու մասին ալ որ խօսուի, անհիմն է:  
 Ուրիշ խնդիր է, որ Ազգ. ժողովը վերադառնալով Աշրդեան խորէն սրբազանը, որ վերջին ամիսներու փորձառութիւնէ յետոյ, և առաձ գտներէն վերջ պատուական պատրիարք մը կը դառնայ:  
 Հայկակ

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԸ ՊԵՏՔ Է ԿԵՆՏՐՈՆԱՅՆԵԼ

Մեր շատ անգամ առիթ ենք ունենում լսելու կամ կարդալու, թէ հարկաւոր է բոլոր այժերը լինի դա մի հասարակական գործող, գրող, լաւ ուսուցիչ, թէ հոգեբանական, կենտրոնացնող զլիսաւոր կենտրոններու: Թիֆլիսի կամ Պոլիսի մէջ ապրող հասարակական գործիչները կամ գործիչները ամեն ճիշդ են թափում, որպէս զի եթէ գաւառներում կայ մի աչքը ընկնող գործող ոչ ոք, անպատճառ թողնի գաւառը, և զայ ապրի գըլխաւոր կենտրոնում:  
 Թիֆլիսը դէպի իրան է քաշում գաւառներում երևան եկող փոքր ի շատէ շնորհալի գործողներ: Ամենքը աշխատում են, որ փոքր ի շատէ օրինաւոր մանկավարժը և ուսուցիչը անպատճառ պաշտօն տնտեսան ոչ թէ գաւառական մի դպրոցում, այլ անպատճառ կենտրոնի մի դպրոցում դիցուք Ներսիսեան դպրոցում: Նոյն եւանդով աշխատում են գաւառներէն Թիֆլիս գրաւել գաւառական մի քաղաքում ապրող այն համեստ գրողին, որը փոքր ի շատէ ընդունակութիւն և շնորք է ցոյց տալիս, և առանսարակ այս և այն ասպարէզի վրա երկաջող փոքր ի շատէ չընորդով գործիչին:  
 Այդ նոյն երևոյթը նկատուում է և Կ. Պոլիսում: Թիֆլիսահայաստանի ոչ մի փոքր ի շատէ շնորդով

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԵՐԵՎԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

##### III

Սեպտեմբերի 6-ին թողնելով Մէլիք-Աղամանեանների Չակ դեղը, որը գտնուում է 15 վերստ հեռու Երևան քաղաքից, ուղեորվեցայ դէպի Երևան: Քանաքերի դիրքին հասած ֆայետոնս պէտք է կանգ առնել. մօտ 30 հողուց բաղկացած Երևանի հայ երիտասարդները մի խումբ պատիւ արեցին դիմաւորել ինձ և արտայայտել իրանց համակրութիւնը դէպի «Մշակ» ուղղութիւնը: Ներանցից մէկը, ուսուցիչ Մուսիսեան, մի քանի խօսք ասեց, ապա բոլոր այդ երիտասարդները, որը ձիով որը ֆայետոնով, ուղեկցեցին ինձ մինչև քաղաքը: Պարտաւորութիւն եմ համարում արտայայտել այստեղ իմ խորին շնորհակալութիւնը Երևանի երիտասարդների կողմից արտայայտած համակրութեան համար:  
 Երևանը հրաշալի դիրք ունի. Հրադան արագան գետը անցնում է նկարչական դաւիթար-

ների միջով, որոնք ծածկված են ձոխ բուսակառութեամբ և ամրող քաղաքը տիրված է կանաչադարձ բուսականութիւնով... Քանաքերից տեսարանը հիանալի է: Բայց երբ մարդ մտնում է քաղաքը, նա հիասթափվում է. փողոցները թողոտ, աները աւերակ, ամեն տեղ կեղտ և աղբ, որը կարծես դարեւում է դիպել այստեղ: Մանաւանդ կեղտոտ է թուրքերի թաղը. եթէ ձեր աչքերով տեսած չէք թուրքերի թաղը, իր բազարով և աւերակ քարվանսարներով, ոչինչ զաղափար չէք կարող կազմել այստեղ տիրող կեղտի մասին:  
 Քաղաքիս փաստաբան օգ. Մուսայանեան առաջարկեց ինձ իր ծառայութիւնը քաղաքիս մէջ ինձ առաջնորդելու: Երևանի արժանի բաներ նայելու համար: Այդպէս և Սարգիս եկեղեցին, որի բազում գտնուում է առաջնորդարանն ու թեմական դպրոցը: Այդ վերջինը բաւական յարմար չէնք է երևում: Ապա այցելեցին թուրքերի մզկիթը. ահազին քառակուսի շինութիւն է, որի մէջ տեղ գտնուում է մի մեծ աւազան, շրջապատված ստուերայիտ ծառերով. հրապարակի երկու ծայրում գտնուում են երկու մզկիթներ, մինը մեծ, որի կողքին և մինարեթը, միւսը աւելի փոքր, իսկ հրապարակի չորս կողմը գտնուում են փոքրիկ

խուցեր, որտեղ ուսում են առնում հոգեբանականութեանը պատրաստող ուսանողները: Մտանք խուցերը. սենեակը կատարելապէս անուր է, մի քանի է գցած յատակի վրա, մի կուժ ջուր է դրված անկիւնում և աւելի ոչինչ, իսկ միւրեքաւոր ուսանողը պառկած է փորի վրա և կարդում է մի դիրք... Ատում են որ 15 տարի է հարկաւոր այդ տեսակ բարձրագոյն ուսումն աւարտելու համար...  
 Թուրքերը բաց արին մեզ համար մզկիթի դուռները, բայց խնդրեցին մեզ ներս չը մտնել, այլ կանդնել շէնքի վրա և նայել... Եթէ համաձայնութիւնը կռիվները հանել, կարող էինք գուլպաներով ներս մտնել, բայց դարձեալ այն պայմանով, որ մեր ոտները չը լինէին... Ես չը մտայ ներս, նայեցի շէնքից և դուրս եկայ: Թուրքերը շատ քաղաքավարի էին, ամեն բան բացատրում էին և ամեն բան ցոյց տալիս:  
 Ես ասեցի որ Երևան քաղաքը ողորմելի և կեղտոտ դուրեւան մէջ է պահուում: Անկարելի է երևակայել անգամ, որ քաղաքն ունի ինքնավարութիւն. փողոցները սալապատկերած չեն, թող տեղ տեղ քիչ է մնում մինչև ծիւղերը հասնելը, կեղտը անկարագրելի է: Փողոցները չեն էլ ջր-

վում: Քաղաքը մտնելու օրը անտանելի չըք էր անում, միայն զլիսաւոր, Ատաֆէլիան փողոցը քիչ ջրված էր, մնացած փողոցներում մարդ խնդրվում էր թողնել:  
 Քաղաքային վարչութիւնը շատ քիչ միջոցներ ունի, մանաւանդ որ իր եկամուտների մեծ մասը ծախսում է ապարդիւն և քաղաքային ինքնավարութեան համար ոչ պարտաւորիչ պահանջները վրա: Եկամուտների մեծ մասը, ասում են, ծախվում է զինուորական պէտքերի, զինուորական նուագախումբ և հրաշք խումբ պահելու վրա: Բայց ինքն քաղաքը չէ էլ օգտուում նուագախումբից, իսկ հրաշք վարչութեան մէջ, հարկաւոր դէպքում, ինչպէս հաւատարմութեան են մի հատ ջրհասն, մի հատ տակառ, մի հատ կային էլ չէք գտնի...  
 Հետեւեալ օրը, սեպտեմբերի 7-ին, վաղ առաւօտեան ուղեորվեցայ ֆայետոնով Էջմիածին, որը քաղաքից կարծես 19 վերստ հեռու է գտնուում: Համապարօք տաղտակի է. մինչև վաղարշապարը միայն մի հատ դեղ էք տեսնում ճանապարհի վրա, այն է Փարաքար հայոց դիրքը:  
 Էջմիածին դալով անմիջապէս այցելեցի Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին, որը հրաւիրեց

այժ, լինի նա մի լաւ հողորական, մի լաւ ուսուցիչ, թէ մի գրող, երբեք չէ յանձն առնում գաւառներում մնալ, գաւառական ժողովրդի մէջ ապրել, և իր ոյժերը նրա համար գործ դնել, այլ փակնելով գաւառները, միշտ ձգտում են դէպի կենտրոնը, դէպի Պօլիս: Եւ ահա հէնց այդ պատճառով է, որ այսօր թիւրքաց չայաստանի քաղաքներում անգամ չը կան փոքր ի շատէ չնոր-քով ոյժեր, այլ դրանց փոխարէն գաւառներին փայլ են մնացել տիրացու-վարժապետները, և Կ. Պօլսում աշուղութիւն չունեցած հողորականները: Մի դէպք անգամ չէ եղել, որ Կ. պօլսեցի մի շք-նորքով գրող կամ գործող նստեր գաւառներում, ժողովրդի մէջ, գործէր այդ ժողովրդի մէջ անմիջական կերպով: Իսկ Պօլսում նստողներն էլ միւս կողմից շատ խելացի և քնական են համարում մի կողմից գաւառացի ոյժերը դէպի կենտրոնը գրաւել, իսկ միւս կողմից թոյլ չը տայ, որ կենտրոնի ոյժերը ցրվին և լուծվին ժողովրդի մէջ, գաւառներում: Այդպիսի մի սխալմի հետևանքը և այդ հայեցակէտը ոչ թէ միայն նպատակաւոր և օգտակար չէ, այլ ուղղակի վնասասակար: Եթէ կենտրոնը իբրև մի անյապ վիշապ կանի բոլոր գործող ոյժերը, եթէ կենտրոնը թոյլ չը տայ, որ ժողովրդի առաջադիմութեան նպատակը տարբեր ցրվի գաւառներում, և մտնի գաւառական կենտրոնի մէջ, այդ այն հետևանքը կունենայ, որ գաւառները միշտ գուրկ կը մընան օրինաւոր կ'են դ'ան իր ոյժերից, կենտրոնի մարդկանցից:

Եւ այդ պահասը արդէն վաղուց զգացվում է մեր բոլոր գաւառներում, ուր գործող ոյժերի բացակայութիւնը ցերեկվայ լյսի նման պարզ տեսնվում է:

Կենտրոններում առանց այն էլ բնականաբար շատերն են խմբվում, ուրեմն ոչ թէ չը պէտք է աւելի զօրեղացնել դէպի կենտրոնը եղած հոսանքը, ոչ թէ չը պէտք է պաշտպանել միշտ կենտրոններում խմբվելու միտքը, այլ, ընդհակառակն, պէտք է այն հայեցակէտը պաշտպանել, թէ գաւառներին էլ պէտք են լաւ ոյժեր, թէ լաւ չնորքով գործողները գաւառներումն էլ կարող են գործ կատարել, և առանց գաւառական լաւ գործիչների կենտրոնը ոչինչ կրթիչ, օգեորիչ և ազդու ներգործութիւն չէ կարող ունենալ գաւառների վրա:

Այդ կենտրոնացման շնորհովն է ահա, որ մեր գաւառը գուրկ է մնում լաւ գործողից, և կենտրոնի մարդկանցից: Իսկ դրա արդիւնքն այն է լինում, որ նոյն իսկ կենտրոնում յղացած մարքերը, լրագրութեան և գրականութեան մէջ գաւառների համար յարուցված հարցերը գաւառներում չեն իրագործվում, կենտրոնի մէջ չեն մտնում, այլ միշտ մնում են իբրև վերացական մտքեր և հարցեր:

Մենք ղեռ աւելի կաննք: Նոյն իսկ կենտրոնի համար ցանկալի է, որ գաւառն ունենայ լաւ, կենդանի գործող ոյժեր, որպէս զի դրանք ժողովրդի մէջ անմիջապէս գործողներն և կենտրոնի մէջ մտնողն են այն գաղափարները, որ մշակում է կենտրոնը և այն նորութիւնները, որոնք գալիս են կենտրոնից:

Խ. Մ.

Ինձ իր մօտ ճաշելու: Մինչև որ թոյլութիւն ստանայի թանկարանը, գրադարանը և ձեւարանն այցելելու, մենք, պ. Մնացականեանի հետ միասին, գնացինք նայելու Ներսէսի լիճը և անտառը: Լիճը մի հրաշալի քարայրն ահազին աւազան է. հարցրի՜ք ձրքան է նրա մշտնութիւնը.— պատասխան չը ստացայ: Անմիջապէս սկսեցի չորս կողմ ման-դալով՝ չափել քայլերովս աւազանի երկարութիւնն ու լայնութիւնը: Յայտնվեց, որ լայնութիւնը 100 քայլ ունի, իսկ երկարութիւնը 250 քայլ: Եթէ քայլը մի արշին համարենք, ուրեմն լիճի ամբողջ մակերեսովը հաւասար կը լինի 25.000 քառակուսի արշինի: Լիճը կիսով չափ լի էր ջրով. ինձ ասեցին, որ վերջին ժամանակները արբիւրից հոսող ջուրը, որով լցվում է աւազանը՝ շատ պակասել է: Արբող ամառը գրեթէ ջուր չը կար լի մէջ: Անտառը, որը ահազին տարածութիւն է գրաւում, շատ աննախանձելի դրութեան մէջ է այժմ. անտառը անխնամ թողված է, ծառեր շատ տեղ չորացել, քոտոտվել են... Ներսէս կաթողիկոսի շինած շերտատան հետքն էլ չը կայ...

Վերջապէս Ներսէս եպիսկոպոսը իմաց տուեց թէ թանկարանն ու գրադարանը կարելի է տեսնել: Գնացի նրա խոցը, ներկայացայ նրան. նա

ՆԱՄԱԿ ՂՈՒԲՈՒՅԻՑ

Սկստմաների 7-ին

Այսօր առաւօտեան ժամի չորսին քաղաքս տաի վրա է կանգնած: Հուշակաւոր Մեջադի Մէջիդի կախարան բարձրացնելու վճիռը այսօր ի կատար ածեցին: Առաւօտեան վաղ ժողովուրդը ամեն կողմից թափվում, խմբվում էր քաղաքիս հարաւարեւելան կողմը (հրէաների թաղի մօտ): Գաւառապետի հրամանով ամեն դիւղից կոչված էին 5 մարդ իրանց տանուտէրի, դիւղական դատաւորով: Ասեղ ցցելու տեղ չը կար, այնքան շատ էր բազմութիւնը: Ղուսարից երկու զորագունդ զօրք ևս ներկայ էր: Մօտ ժամի 7½-ին կախարան հանեցին նրանց: Մինչ կախարան բարձրանալը Մեջադի Մէջիդը ընդդիմադրութիւն էր ցոյց տալիս: Այլ և ձախ բացառապէս քրիստոնէականներին հայնջում էր, — ոտով խփում դահճին, դիւստրներին. նա քաւութիւն և թողութիւն էր խնդրում իր հաւատակիցներից—մուսուլմաններից, որոնցից «հաւալութիւն էր» պահանջում: Նա զայրացած էր դահճի վրա: Այդ օրը Մեջադի Մէջիդը խոտորվանվեց, որ ինքն է անձամբ սպանել խաչակալութեաննային և այդ գործում ոչ քի մասը խառն չէ:

Մեջադի Մէջիդը միւս երկու ընկերներին, որոնց թիֆլիսի դիւստրական դատարանը մահւան պատժի էր դատապարտել, — նրանց զանդա-տի և կովկասի կառավարչապետի վճիռի հիման վրա ներումն են ստացել և մահւան պատժը փոխարկվել է մշտական տաժանակիր աշխատանքների:

Հետաքրքրի է հետեւելը Մեջադի Մէջիդի կենտրոնը: Նա միջնահասակ մարդ է, դէմքի ուղիղ զծագրութիւններով: Ուժեղ է և վիթխարի: Մարդու վրա ազդու տպաւորութիւն է թողնում: Յուշիւն ամուսն, երբ դիւստրական դատարանը քննում էր նրա գործը, գնեկրա-նախազանք հարցրեց յանցաւորից, թէ քանի յանցանք է գործել և մարդ սպանել: Մեջադի Մէջիդը հողու անխոտ-վութեամբ և սրտի հանգստութեամբ անվրդով պատասխանեց, — «չը իրումն ձեւարիտ, 80 է, 90 թէ 100 մարդ եմ սպանել»:

Մ. Ս.

ՆԵՐՍԵՍԻ ԼՈՒՌԻՐ

Կ. Պօլսից մեզ գրում են. «Պատրիարքական հարցը քննող թիւրք յանձնաժողովը հրաւիրեց պատրիարքին ներկայ լինելու նիստերից մէկին: Սակայն պատրիարքը հրաժարվեց դնալու, պատճառ բերելով իր հիւանդութիւնը»:

Այս օրերս կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսան մասնագէտները համար հետաքրքրական մի քանի գրքեր: Դրանցից մէկն է Գօշէի աշխատութիւնը՝ «ПРИВИВКА И УХОДЪ ЗА ФРУКТОВЫМИ ДЕРЕВЬЯМИ» վերնագրով: Միւս գրքը վերաբերում է անտառապահութեան: Բայի գրանից ընկերութիւնը հրատարակել է կովկասեան ցուցահանդեսի իրերի ընկարագրութիւնը: Այդ գրքերից առաջինը

շատ սիրալի կերպով ընդունեց ինձ: Այլ ևս չեմ խօսում մեր հին ծանօթ, և ամբողջ թիֆլիսից սիրված Արիստակէս եպիսկոպոսի մասին, բայց և այն չորս եպիսկոպոսները, որոնց հետ ծանօթացայ, այն է՝ Ներսէս, Երեմիա, Սարգիս և միւս Արիստակէս եպիսկոպոսները՝ շատ սիրալի կերպով դիմաւորեցին ինձ, ամեն տեղ տարան ինձ, ամեն բան ցոյց տուցին: Տեսայ մայր-եկեղեցին, թմնադարանը և գրադարանը: Զարմանալի է միայն, որ ցոյց տուողները իրանք շատ բան չը գիտեն և չեն կարող բացատրել այցելուին. այն առարկան, լինի դա խաչ, գաւազան, պատկեր, մայր-եկեղեցում զրված կաթողիկոսական աթոռ, հնդկական շուրջառ, թէ ուրիշ առարկայ, որը չէ կրում իր վրա մի որչա արձանագրութիւն, — յայտնի չէ մեր վարդապետներին թէ ինչ ծագու-մից է, ինչ ժամանակի, ինչ դարի արդիւնք է... Ոչ ոք չը կայ, որը առարկայի ոճից (ստիլից) կարողանար իմանալ առարկայի ծագումը և որ-քան հին լինելը...

Ինձ շատ հետաքրքրեցին գրադարանում պահ-ված ձեռագիր շքեղ աւետարանները, իրանց դե-ղեցիկ կազմերով: Մի փոքրիկայ կազմին կոմս Ուվարով առաջարկում էր 60.000 ռուբլի: Հետա-քրքրեցին ինձ նմանապէս և ուսուցաց կայսրների

գործարված է բուսաբանական ամենազեղեցիկ նկարներով:

Էրզրումից մեզ գրում են. «Ենթադրում են, որ կարապետ եղան Կ. Պօլսից պէտք է ուղևորվի Կարին՝ Սանատարեան դպրոցի մի քանի խնդիր-ները կարգադրելու համար»:

«Տարազ» հանդէսը տպագրել է հետեւելը. «Ընդունից մեզ հարցրում են, որ Շահը Միդա-Միլքում-խանին առաջարկել է Հուսումը ընդունել դեսպանի պաշտօն, բայց վերջինս մերժել է և անպատճառ կանխում է մտնել տաճկաց ծառայ-յութիւնը Տաճկահայաստանում պաշտօն ստանա-լու պայմանով: Միդա-Միլքում խանը առաջ էլ կողմ է տաճկաց ծառայութեան մէջ և Կարեան-ների փեսայ է»:

Շուշու թեմում արդէն նշանակված է թեմա-կան տեսուչ: Մենք կարծում ենք, որ թեմական առաջնորդը թեմական տեսչի ընտրութիւնն անե-լիս չէր մոռանայ, թէ Ղարաբաղի ահազին թեմը գուրկ է դարձնելուց և մեծ կարօտութիւն ունի լաւ գործողներ: Թեմական իշխանութիւնը դրա հետ միասին ամեն ջանք պիտի թափի, որպէս զի դէթ մի-մի կենտրոնական զարգացր բացվե-ն այն յետնկած անկեւններում, որոնք մինչև այժմ գուրկ են մնացել դպրոցից, չը նայած որ այդ տեղերում ապրում են հաղարատը ընտանիքներ տասնեակ ահազին դիւղերի մէջ:

«Daily News» լրագրի մուտքը Կ. Պօլսի նու-րից արգելված է:

Կիրակի օր, սեպտեմբերի 16-ին տեղի ունե-ցաւ Սուրամի տօնակի հանդիսաւոր բացումը: Այդ օրը թիֆլիսի կայարանից տօնակի ուղևորվե-ցին երկու արտակարգ դեսպաններ: Բացմանը ներկայ լինելու դիմացին կառավարչապետ գեներալ Շե-րեմետով և ուրիշ բարձրատիճան անձինք: Տօն-ակի բացմանը ներկայ էր հաղորդակցութեան ճանապարհների միւնիստր պ. Գիւրբէնեան:

Մեզ ուղարկված է «Զարկեարի քնարը» վերնա-գրով բանաստեղծութիւնների ժողովածու: Դա Զարկեար կեղծ անունով անձի գրուածքների ժողո-վածու է, որ երկրորդ տպագրութեամբ լոյս է ընծայում Գրիգոր քանանայ Գրիգորեանց: Ժողո-վածուի մէջ կան ոտանաւորներ, որոնք լաւ գաղա-փար են տալիս մեր ժողովրդական բանաստեղ-ծութեան և նրա աշխարհայեցողութեան մասին:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ձմեռը Կայսրութեան զլխաւոր քաղաքներում և երկու մայրաքաղաքներում տեղի պիտի ունենան բարոյական-լրօնական դրոյցներ հասարակութեան զարգացաւ մասի համար:

Բանասպան գլխաւոր վարչութիւնը հարց է յա-րուցել, որ կանանց համար ծ և ծ ի պատիճը փո-խարինվի Սախալին արքայութիւնը:

ձեռքով հայ կաթողիկոսներին շնորհված շքեղ հրովարտակները: Ապացոյց, որ ուսուցաց կառա-վարութիւնը համարել է միշտ հայոց եկեղեցին՝ մի հնադարեան, առաքելական, բուն ուղղա-փաւ եկեղեցի, որ այդ հրովարտակները, որոնք վերին աստիճանի սիրալի ոճով են զրված, անուանելով հայոց եկեղեցին «մեր ամենատրեղի կամ ամենաազնիւ հայկական ազգի եկեղեցին», կրում են շքեղ շրջանակներ, որոնք վրա նկար-ված են Գրիստոսի, Գրիգոր Լուսաւորչի և Ս. Մեսրոպի պատկերները: Հրովարտակներից մինի վրա (Գէորգ կաթողիկոսին տուածը) Ս. Մես-րոպը ձեռքում բռնած ունի հայ և քրէն այբը-նարան:

Այցելեցի նմանապէս և ձեւարանը, որը վատ շինութիւն չէ, միայն կարծեմ շատ ցուրտ պէտք է լինի ձմեռ ժամանակ. ամենաբաւ մասը այդ շինութեան մէջ՝ ընդարձակ ննջարանն է: Ինձ ասեցին, որ ձեւարանը ունի այժմ մօտ 150 ա-չակերտ: Լաւարանները շատ նեղ և ողորմելի սե-նակներ են: Ձեւարանի գրադարանը ունի արդէն մօտ 12.000 հատոր գիրք: Այցելեցի վերջապէս և տպարանը, և ձուլարանը և դեղատուը և հիւան-դանոցը: Տպարան մտնելով ևս գտայ այդտեղ Արիստակէս եպիսկոպոս Գաւթեանցին սրբազրու-

Պ. Ալէքսանդր Աբէլեան Բագուից խնդրում է մեզ տպագրել հետեւելը. «Մշակի՜ւ անցելու հա-մարները մէկում տղված էր Պարիզի հայ ու-սանողական միութեան մի հաշիւը: Կարդալով այդ հաշիւը ես ինձ գտայ մի անյարմար դրու-թեան մէջ: Բանը նրանումն է, որ անցելու տարի իմ դէպի Պարիզ ուղևորութեան օրը, Բագուում պ. Կարապետ Լազարեանց յանձնեց ինձ երեսուն ֆր-անկ իբր նուէր «Պարիզի հայ ուսանողական միու-թեան»: Այդ փողերը ես յանձնեցի պ. Կ. Տէր-Մկրտչեան ուսանողին, որի մասին և յայտնեցի ուսանող Բագուեանցին: Որքան յիշում եմ, սա առաջին նուիրաբերութիւնն էր յիշեալ միութեան օգտին: Ուստի վստահ եմ, որ միութեան վարչու-թիւնը չի զլանայ բացառութիւն տալ այդ մասին, որով և ինձ կազատի կասկածանքից»:

Բուխարայի կառավարութիւնը վճուել է խնդրել ուսուցաց կառավարութիւնից, որ թոյլ տրվի Մօսկ-վայում նշանակել բուխարական հիւպատոս:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ շուտով Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ կը կապվի առևտրական նոր զաշնաղբը:

«Новое Время» լրագրում կարդում ենք հետե-ւելը. «Այս ուսումնական տարվայ սկզբից ու-սուց լեզուի դասատուութիւնը մօտնվում է Չերսո-գորիայի բոլոր միջնակարգ և բարձրագոյն դըպ-րոցներում: Յետինի հողերը սեփնաբայում և իրական ինստիտուտում ուսուցաց լեզուն վաղուց է արդէն, որ աւանդվում է»:

Պետերբուրգում հրատարակվող «ДѢНЬ» լրագի-րը էր 806 համարում տպագրել է մի առաջնոր-գող, որի մէջ ի միջի այլոց խօսվում է հայ ժո-ղովրդի ազգային յատկութիւնների մասին: Մենք աւելորդ ենք համարում «ДѢНЬ» լրագրի ասած-ներին պատասխանել, որովհետեւ նա արժանի չէ պատասխանի հէնց միայն այն պատճառով, որ հարկաւոր չէ համարել նեղութիւն կրել և մի փոքր մօտիկ ծանօթանալ այն ժողովրդին և այն հարցերին, որոնց մասին գրում է...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Գերմանական դիվիզիաները գլուխ կտորեցին, դերմանացի զինուորները արկնը թափեցին, նաւեր ուղարկեցին, վառօդ ու զնդակ փչացրին, որպէս զի Աֆրիկայի խորքերում ունենան գաղթական երկիրներ:

Եւ այսօր Գերմանիան Աֆրիկայումն ունի եր-կիրներ, որոնց կատարեալ տէրն է: Եթէ զաղթա-կան երկիրներ ունենալու տենդով բռնված ժա-մանակ գերմանական դիվիզիաներին հարցնէլք, թէ ինչու էք այդքան տքնում տիրապետել Աֆ-րիկայի վայրերի երկիրներին, անկասկած պա-տասխան կը ստանայիք.— «վայրենիւններն քաղա-քակրթելու համար»:

Անկասկած, եւրօպական գաղթական քաղաքա-

թիւն անելիս. նա անմիջապէս վերկացաւ տեղից սիրալի կերպով բարեկց ինձ և մեծ պատրաս-տակարութեամբ ամեն բան ցոյց տուեց ինձ քը պարանում և ձուլարանում:

Ես առհասարակ այն տպաւորութիւնը դուրս բերեցի էջմիւշանից, որ այդ կրօնական ահազին և հարուստ հաստատութիւնը շատ մեծ գործ կա-րող էր կատարել, եթէ ժամանակակից պահանջ ներքին համեմատ ոգով ներշնչված ուղղութիւն ունենար: Էջմիւշանը կարող էր հեղեղել ամբողջ հայութիւնը ժամանակակից պահանջն ամբողջ ժողովրդական քարոզչներով և ուսուցիչներով հեղեղել ամբողջ հայութիւնը ժամանակի պահանջ ներքին համապատասխանող բազմակողմանի դրու-կանութեամբ:

Ներսէս եպիսկոպոսին և Արիստակէս եպիսկո-պոս Սեղրակեանին (որի մօտ ճաշեցի) մնաս բա-րև ասելուց յետոյ, ես ժամը 5-ին կէսօրից յետոյ նորից նստեցի ֆախտօսն և ուղևորվեցայ դէպի Երևան:

Երկու ժամից յետոյ ևս արդէն Երևանումն էի:

Գրիգոր Արծրունի



